ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N2582 - Ա **14 ապրիլի 2009թ.**

ՆՈՐԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՓՈՂՈՑԻ Հ. 31 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐԴՈՒՀԻ ՆՇԱՆԻ ԱՆՏՈՆՅԱՆԻ, ՀՈՎՀԱՆՆԵՍ ՆՇԱՆԻ ԱՆՏՈՆՅԱՆԻ, ԱՆԱՀԻՏ ՆՇԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Վարդուհի Նշանի Անտոնյանի (ծնված 16.03.1954թ.), Հովհաննես Նշանի Անտոնյանի (ծնված 04.08.1959թ.), Անահիտ Նշանի Խաչատրյանի (ծնված 19.05.1955թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Նորաշխարհային փողոցի հ.31 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 876.63քմ, որից 800քմ մակերեսով հողամասը Վարդուհի Նշանի Անտոնյանին, Հովհաննես Նշանի Անտոնյանին, Անահիտ Նշանի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է (վկայական տրված 20.12.1993թ. հ.2122): Օրինական հողամասին կից օգտագործվող 76.63քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1998 թվականը, 30.09.2008թ. ժառանգության իրավունքի վկայագիրը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Զեյթուն տարածքային ստորաբաժանման 03.10.2008թ. հ.1519, Երևանի քաղաքապետարանի <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 31.03.2009թ. հ.20/2-Ե/162 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 19.03.2009թ. հ.20-Ել-1960 եզրակացությունը, համաձայն որի Նորաշխարհային փողոցի հ.31 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Նորաշխարհային փողոցի հ.31 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Վարդուհի Նշանի Անտոնյանի, Հովհաննես Նշանի Անտոնյանի, Անահիտ Նշանի Խաչատրյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած

և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 800քմ մակերեսով հողամասին կից 76.63քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 76.63քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Զեյթուն տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Նորաշխարհային փողոցի հ.31 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Նորաշխարհային փողոցի հ.31 տուն>>։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Զեյթուն տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Վարդուհի Նշանի Անտոնյանի, Հովհաննես Նշանի Անտոնյանի, Անահիտ Նշանի Խաչատրյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Քանաքեռ-Զեյթուն թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ**